ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

IV

Շահլամեանը մեզ մօտ երկու կոնցերտ տուեց։

Ինչպէս որ սովոր էի նախընթաց անգամ՝ առաջին կոնցերտին թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր. այն ինչ երկրորդ կոնցերտին—թատրոնի դահլիճը կիսով չափ դատարկ էր։ Ինչով բացատրել այս հանգամանքը։ Նրանով որ Շահլամեանը դուր չեկաւ հասարակութեանը։ Ապա ինչու նրա մասին այնքան շատ գրուեց թէ տեղական և թէ օտար մամուլի մէջ։ Միմիայն նրա համար որ Շահլամեանը տիրապետում է մի հրաշալի, զօրեղ և ներկայ ժամանակներում հազուագիւտ մի տենոր ձայնի։ Բայց ջոկ բան է՝ լաւ ձայն ունենալը, և ջոկ բան է—նրանից օգտուել իմանալը։ Շահլամեանը տէր է լիապէս առաջինին և գրեթէ զուրկ երկրորդից։ Համարեա նոյնը՝ եթէ մի միջակ երաժշտի ձեռը տալու լինինք մի հիանալի երաժշտական գործիք։ Պարզ ասելով Շահլամեանը շատ քիչ երաժշտական հոտառութիւն ունի։

Եթէ մեր հասարակութեանը առիթ տուէր Շահլամեանին լսելու օպերայի մէջ, այսինքն մի խմբի մէջ, երգիչների շրջանում, նուագախմբի ձայնակցութեամբ, երգիչը դուր կը գար հասարակութեանը անհամեմատ աւելի, պատճառ որ օպերային երգչի համար աւելի կարևորը ձայնն է քան երգել իմանալը. իսկ կոնցերտային երգչի համար ամենաանհրաժեշտը երգել իմանալն է։ Թիֆլիսեցիներին լաւ ծանօթ տենոր Լոդի'ն և բարիտոն Գրեանիշնիկովը իրանց ձայների կէսը կորցնելով հանդերձ—վայելում էին հասարակութեան համակրութիւնները և մինչև օրս շարունակում են անուն վայելել իբրև կոնցերտային նշանաւոր երգիչներ—հէնց այն պատճառով որ նրանք երգել գիտեն։ Եթէ նրանց տուէք Շահլամեանի ձայնի կէսի կէսը—նրանք հրաշքներ կը գործէին։ Անշուշտ՝ կարելի է յուսալ, որ և Շահլամեանը գտնուելով բեմի վրայ (այն էլ Պետերբուրգի), ձեռք կը բերի մի յայտնի աստիճանով երգել իմանալը և հէնց դրանով կ'ուղղի իւր անցած և ներկայի համար արդէն հնացած իտալական դպրոցը։ Նոյն իսկ իւր այդ կոնցերտներում երգած կտորների ընտրութիւնը վկայում է մեր

երգչի անճաշակ լինելը։ Առաջին որ զանց արած լինելով բազմաթիւ կոնցերտալին պիեսներ, նրա ընտրած երգածները մեծ մասամբ զանազան բոմանսներ և օպերալին եղանակներ էին. և երկրորդ նրա այդ երգած եղանակներն ալնպիսի հնացած օպերաներից էին, որոնց իսկ գոլութիւնը փոքր ի շատէ երաժշտական ժամանակակից մարդիկ մշանպամալն իրաւունք ունին մոռացած լինելու։ Օրինակի համար Տրուբադուրա՝ն և մանաւորապէս Ֆաւորիտա՝ն։ Ի՞նչ բանի համար էր ընտրել մեր երգիչը Ֆաւորիտա՝ն, իւր ձայնի ուժեղութիւնը ցոյց տալու համար բարձր դո՝ի մէջ։ Եւ ինչ դուրս եկաւ։ Այն որ հասարակութիւնը բաւականին անտարբեր կերպով ականջ դրեց այդ դո՝ին առանց հրապուրելու։ Եւ միթէ իրաւունք կալ հրաւանքի ցոյցեր պահանջելու մի հատ նոտալի համար։ Ոչ. երգեցողութիւնը ֆոկուս չէ։

Բացի անճաշակ ընտրութիւնից, Շահլամեանն ապացուցեց որ նոյն իսկ իւր այդ ընտրածները նա ըստ հարկին չէր մարսել։ Երգիչների մեծամասնութեան նման նա լալտնի դարձրեց թէ բոլորովին չը գիտէ լարգել հեղինակների ընտրած և ընդունած նշանները, դաշնակութիւնը (ритмъ, rhythme) և չափերը։ Այս պատճառով պիեսներից մի քանիսն իրանց մասերում ալլանդակած էին չը ճանաչելու աստիճանի չափ։

Շահլամեանի գործածած միակ ձևը սա է. նա կամ վերցնում է սաստիկ forte'ը (բարձրաձայն) և իսկոյն արագ անցնում pianissimo'ի (ցածրաձայն, մեղմ ձայն), կամ հակառակն անում։

Տիրապետելով մի զօրեղ շնչառութեան, որ շատ անհրաժեշտ է առաջնակարգ երգչի համար—Շահլամեանն ի չարն է գործ ածում իւր այդ ընդունակութիւնը՝ արագ կերպով forte'ից piano'ին անցնելու համար, կանգ առնելով երկար, ավելի քան հարկաւոր է մի նոտալի վրայ։ Այս ամենը շատ կարևոր և շատ լաւ է եթէ անուում է ժամանակին և տեղին. իսկ անդադար արագ այդ ֆորտէ'ից պիանո'ի և պիանո'ից ֆորտէ'ի անցնելը (модулированіе) թէ լոզնեցնում է լսողութիւնը և թէ պակաս երաժշտական է։

Շահլամեանի՝ իւր կոնցերտներում երգած հայ եղանակներից և ոչ մէկն ինձ դուր չեկաւ նրա երգած մեկնութեամբ (интерпретація)։ Եթէ նա նրանց երգէր ավելի պարզ, առանց ցանկութեան իւր անվերջանալի՝ ֆորտէ'ից պիանո'ն և պիանո'ից ֆորտէ'ի արագ ելևէջները ցոյց տալու համար—նրանք անշուշտ առաւել շատ դուր կը գալին թէ ինձ և թէ շատ շատերին։ Ընդ ամին ես առիթ ունեցայ կրկին համոզուելու որ հայ լեզուն շատ դեղեցիկ է երգեցողութեան մէջ։ Ես մտաբերեցի անցեալ ձմեռ մեղ հիւր եղած բարիտոն Եղիազարեանցին։ Ինչպիսի զանազանութիւն երգել իմանալու մէջ։ Թէև Եղիազարեանցի ձայնը միջակ կարողութեան է և ալս կէսում տեղի է տալիս Շահլամեանի ուժեղ ձայնին, այնու ամենայնիւ շատ ախորժելի էր լսել Եղիազարեանցին թէ օպերաներում և թէ մանաւորա-

պէս կոնցերտներում։ Անկասկած է որ նաև Եղիազարեանցին չի կարելի կատարելագործած կոնցերտային երգիչ համարել – սակայն նա վերին աստիճանի երաժշտական է և նրանից շատ շուտով կը կազմւի մի հնորհալի արտիստ։ Իսկ Շահլամեանը կարօտ է դեռ երկար կատարելագործութեան՝ երաժշտականութիւն ձեռք բերելու համար։

Շահլամեանից յետոյ Թիֆլիսում կոնցերտ տւին պ. պ. Վարդիկեան և Պոպով, մասնակցութեամբ ջութակահար Ասատուրովի։ Ես չը կարողացայ ներկայ լինել այդ կոնցերտին. ասում են շատ քիչ մարդ էր ժողովւել նրանց լսելու։

Յունիս 22, 1892 թ.